



DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA (EASTERN)
ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԹԵՄԻ

Archbishop Khajag Barsamian, Primate

THE EASTER MESSAGE OF ARCHBISHOP KHAJAG BARSAMIAN
Primate of the Eastern Diocese of the Armenian Church of America

Ordinary Saints

Peter was sitting in the outdoor courtyard when a maid came up to him and said, "You too were with Jesus the Galilean." But he denied it before everyone, saying, "I don't know what you mean." ... After a little while the bystanders came up and said to Peter, "Certainly you are also one of them: your accent betrays you." Then he began to invoke a curse on himself and to swear, "I do not know the man!" Immediately the cock crowed – and Peter remembered the saying of Jesus: "Before the cock crows, you will deny me three times." He went outside, and wept bitterly. (MATTHEW 26:69-75)

EASTER IS OUR GREAT STORY OF VICTORY, our assurance of triumph. In the resurrection of Jesus Christ, God's love for mankind won the contest against man's age-old enemies, Sin and Death. The faithful are promised to share in that victory.

But to read the gospels, one is struck by the aura of failure that overhangs the figures in the resurrection story. Consider the situation of the disciple Peter. In a supreme moment of decision, he denies even knowing Jesus, the teacher he has followed for three years. It's a failure of discipleship – and worse, of friendship. Yet Peter is clearly not a venal or evil man; in many ways he merely does what anyone else would do in the same situation. Peter's failure merely proves how ordinary he is.

The all-too-ordinary disciple has plenty of company in the Easter story. Along with Peter's denial, we witness the tearful despair of Mary Magdalene outside the tomb; the discouragement of the disciples on the road to Emmaus; the skepticism of Thomas; the terror of the main body of disciples hiding out in the upper room. We are tempted to ask: *What are these stories doing in the Gospel at all?*

Scripture offers no direct answer to this question; but it does lead us to an observation. The great Easter message of hope, redemption, and new life was Christ's gift to the world. But to carry it forward *into* the world, Jesus entrusted his gift to messengers like these: the flawed and fearful, the discouraged and doubtful. Ordinary people, whose only distinction was that they had borne witness to something beyond understanding.

How remarkable it is to realize that these were the earliest Christian saints! For eventually, Peter and the rest became martyrs for Christ. They were individuals of no special distinction. But in light of our Lord's resurrection they found the inner strength to stand with him, and not to deny him, in the end. "Saint" is the name we give to such people.

Sainthood has been a subject of renewed interest in the Armenian Church lately. In the month following Easter, we will mark the anniversary of the canonization of the Holy Martyrs of the Armenian Genocide: the first Armenian saints to have been acknowledged in hundreds of years. The canonization was a great milestone for our nation; but like all weighty moral undertakings, it did not occur without questions. Good and serious people questioned whether it was possible to acknowledge such a large company of people as saints of the church. Indeed, one can say with certainty that the vast majority of Genocide martyrs – people we now regard

as saints – were flawed or otherwise unremarkable in their lives, apart from the circumstances of their sainthood.

But now, after a year of living in the consciousness of these “new” saints, and with Easter again before us, perhaps we can find guidance in the Gospel account of those who witnessed the resurrection.

The saints are indeed ordinary people. But far from being an obstacle to our understanding, the very ordinariness of the saints is what makes them examples – permits them to be *aspirational figures* for us. If they were superhuman beings with seamlessly virtuous lives, we might admire them; but we would have a ready excuse, an alibi, for failing to live up to their example. Realizing that they were ordinary people – *men and women just like us* – places the responsibility to live saintly lives directly on our shoulders.

This is surely one of the great moral revolutions Christianity brought into the world. To the imperial pagan world of Christ's time, heroes were the offspring of gods – an unattainable distinction. The spectacle of heroic suffering – tragedy – was meant to make men tremble, while encouraging them to rest satisfied that, as mortals, they were beneath the notice of the careless pagan divinities.

Contrast this with the Christian saints, who have arisen from every station of life, and often are not even recognized as special until some moment of crisis. Their stories are meant to expose the deceit and injustice underlying the world around them – and to disrupt *our own* self-satisfied appraisal of the world around *us*. Their suffering is heroic not because it defies unfeeling gods, but because it imitates the experience of God's Son – who lived, felt and suffered alongside his children, out of love for them.

The miracle of Easter is the gift that all the saints embraced. However ordinary their lives may have been, carrying Christ's resurrection in their hearts magnified them. When their moment of decision came – whether in the Apostolic Age, in 1915, or *even today* – they refused to deny their Lord.

It falls to us to accept our own role in this drama. As the Easter story shows, Christ entrusted his message of faith, love, and redemption to people no different from us. Carrying it forward has been the work of dozens, hundreds, millions of faithful individuals – our own ancestors among them. That gift now rests in our hands, and whether it continues to be carried forward through another century is largely up to us. Let that thought guide us this Easter, as we greet Christ's resurrection for the first time in the company of our sainted Genocide Martyrs, and affirm with them the truth of those immortal words:

Krisdos haryav ee merelotz! Orhnyal eh harootiunun Krisdosee!
Christ is risen from the dead! Blessed is the resurrection of Christ!

Easter 2016



DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA (EASTERN)
ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԹԵՄԻ

Archbishop Khajag Barsamian, Primate

**Հայց. Եկեղեցոյ Հիսիսային Ամերիկայի Արեւելեան Թեմի Առաջնորդ
ԳԵՐՇ. Տ. ԽԱԺԱԿ ԱՐՔ. ՊԱՐՄԱՍԵԱՆԻ Ս. ՉԱՏԿԻ ՊԱՏԳԱՍԸ**

ՍՈՎՈՐԱԿԱՆ ՍՈՒՐԲԵՐ

«Երբ Պետրոս դուրսը՝ գալիքը նստած էր, աղախին մը եկաւ անոր եւ ըսաւ. “Դո՛ւն ալ Գալիլեացի Յիսուսի հետ էիր”: Բայց ան ուրացաւ բոլորին դիմաց՝ ըսելով. “Չեմ գիտեր ի՞նչ կը խօսիս”... Քիչ ետք՝ հոն գտնուողները ըսին Պետրոսին. “Իրապէս դուն ալ անոնցմէ մէկն ես, որովհետեւ խօսքերդ կը մատնենք քեզ”: Այն ատեն սկսաւ նզովել ու երդում ընել՝ ըսելով. “Ես չեմ ճանչնար այդ մարդը”: Իսկոյն արաղաղը կանչեց: Պետրոս յիշեց Յիսուսի խօսքը՝ որ իրեն ըսած էր. “Աքաղաղը չկանչած՝ երեք անգամ պիտի ուրանաս զիս”. Եւ դուրս ելլելով դառնապէս յացաւ»: (Մատթէոս ԻԶ 69-75)

ՍՈՒՐԲ ՉԱՏԿԻՆ ՍԵՉԻ ՀԱՄԱՐ ՅԱՂԹԱՆԱԿԻ ՄԵԾԱԳՈՅՆ ԴԵՊՔՆ Է, մեր յաղթանակին գրաւականը: Յիսուս Քրիստոսի Յարութեամբ մարդկութեան հանդէպ Աստուծոյ սէրը զգեսնեց մարդուն դարաւոր թշնամիները՝ մեղքն եւ մահը, եւ այդ յաղթանակին մասնակից դառնալու խոստումը տրուեցաւ հաւատացեալներուն:

Սակայն Աւետարանները կարդալով մարդ կ'ապշի Յարութեան պատմութեան մասնակից դէմքերու կողմէ պարզուած ճախողութեան ոգի մը, որ կը համակէ : Զննենք Պետրոս առաքեալի կացութիւնը: Որոշման գերագոյն պահուն, ան կը ստէ՝ որ կը ճանչնայ Յիսուսը՝ իր ուսուցիչը, որուն հետեւած եղած էր երեք ամբողջ տարին: Ասիկա դաստիարակութեան ճախողանքն է, եւ տակաւին վատագոյնը՝ բարեկամութեան: Թէեւ Պետրոս անսկզբունք կամ չար մէկը չէր, ան պարզապէս կ'ընէր այն՝ ինչ որ ուէ մէկը պիտի ընէր նոյնպիսի պարագայի մը: Պետրոսի ճախողութիւնը պարզապէս կը փաստէ, թէ ինչպիսի սովորական մէկն էր ան:

Սովորական դասակարգի պատկանող այս աշակերտը բազմաթիւ բախտակիցներ ունի Չատկական պատմութեան մէջ: Պետրոսի ուրացումին զուգահեռ՝ ակնառտեալ կ'ըլլանք գերեզմանի դրան առջեւ Մարիամ Մագդաղենացիի արտասուախառն յուսահատութեան, Էմմաուսի ճանապարհին աշակերտներու յուսալքութեան, Թովմասի թերահաւատութեան, վերնատան մէջ առաքեալներու հիմնական խումբի ահ ու սարսափին: Այս բոլորին ի տես՝ կը տարուինք հետեւեալ հարցումը ընել. «Արդեօք ինչո՞ւ այս պատմութիւնները տեղ գտած են Աւետարանին մէջ»:

Աստուածաշունչը ուղղակի չի պատասխաներ այս հարցումին, սակայն մեզի խորհրդածելու առիթ կու տայ: Յոյսի, փրկագործութեան և նոր կեանքի Չատկական պատգամը Քրիստոսի մեծագոյն ընծան է աշխարհին: Եւ աշխարհի մէջ՝ Յիսուս իր աւանդը սերունդէ սերունդ փոխանցելու պաշտօնը վատահեցաւ այսպիսի թերի և երկչոտ, յուսահատ եւ թերահաւատ անձերու: Պարզ մարդիկ, որոնց միակ տարբերութիւնն այն էր, որ անոնք ակնառտեալ վկաներն էին մարդկային միտքէն ու հասկացողութենէն վեր իրողութեան մը:

Որքա՞ն յատկանշական է անդրադառնալ՝ թէ ասոնք էին անդրանիկ քրիստոնէայ սուրբերը: Պետրոս և միւսները դարձան Քրիստոսի նահատակ վկաները: Անոնք բացառիկ կարողութեան տէր անհատներ չէին: Սակայն Տիրոջ Յարութեան լոյսին շնորհիւ անոնք տոգորուեցան ներքին ուժականութեամբ մը կանգնելու Անոր կողքին և ոչ թէ զԱյն ուրանալու: Այսպիսի մարդիկ մենք կոչած ենք «սուրբեր»:

Սրբութիւնը վերջին շրջանին Հայ Եկեղեցոյ մէջ դարձեալ հետաքրքրութեան առարկայ դարձած է: Չատկիկն յաջորդող ամսուն պիտի նշենք սրբադասման տարեդարձը մեր Սուրբ Նահատակներուն՝ վերջին հարիւրամեակներու ընթացքին սրբադասուած առաջին հայ սուրբերուն: Սրբադասումը մեծ հանգրուան մըն էր մեր ազգին համար, բայց ինչպէս ամէն ծանրակշիռ

բարոյական հարցի մը պարագային՝ այս անգամ եւս եղան առարկութիւններ: Բարեմիտ և լուրջ մարդիկ հարցուցին թէ արդեօք հնարաւոր էր մէկ անգամէն բազմաթիւ մարդոց խումբ մը հռչակել որպէս եկեղեցոյ սուրբեր: Յիրաւի՝ կարելի է ըսել, թէ Յեղասպանութեան նահատակներուն մեծ մասը (անձեր՝ զորս մենք այսօր սուրբեր կը նկատենք), թերութիւններ ունէին, կամ աննշան մարդիկ էին իրենց կեանքին մէջ, նկատի չառնելով անոնց սրբութեան հանգամանքները:

Սակայն այժմ՝ Սուրբ Զատիկի օրերուն, այս «նոր» վկաներու գոյութեան իրազեկ ըլլալու գիտակցութեամբ տարի մը ապրելէ ետք, մեզի թերեւս ուղղութիւն եւ առաջնորդութիւն կրնան տալ Աւետարանին մէջ յիշուած Յիսուսի Յարութեան ականատեսները:

Յիրաւի՝ սուրբերը պարզ մարդիկ էին: Սակայն անոնք մեր հասկացողութիւնը չեն խոչընդոտեր, այլ անոնց պարզութիւնը զիրենք օրինակելի եւ ներշնչումի աղբիւր կը դարձնէ: Եթէ անոնք գերբնական էակներ ըլլային՝ անթերի ու առաքինի կեանքով, մենք պիտի սքանչանայինք անոնց վրայ, սակայն նոյն ատեն պիտի չկարենայինք հետեւիլ անոնց օրինակին՝ պատրուակներ փնտռելով: Այն գիտակցութիւնը թէ անոնք պարզ մարդիկ էին – մեզի պէս այրեր ու կիներ – մեր ուսերուն վրայ կը դնէ պատասխանատուութիւնը սրբակեաց կեանք ապրելու :

Այս գիտակցութիւնը անկասկած բարոյական մեծագոյն յեղափոխութիւնն է, զոր Քրիստոնէութիւնը բերաւ աշխարհին: Քրիստոսի օրերու կայսերական հեթանոսական աշխարհին մէջ , հերոսները չաստուածներու սերունդն էին, ինքնին անհասանելի գերմարդկային վիճակ մը: Հերոսներու կրած տառապանքներու նկարագրութիւնը, այսինքն՝ ողբերգութիւնը մարդիկ սարսափեցնելու նպատակ կը հետապնդէր, որպէս զի անոնք գոհանային մահկանացուի իրենց վիճակէն, քանի որ անհոգ հեթանոս չաստուածներու ուշադրութեան արժանի չէին կրնար նկատուիլ:

Ասիկա բաղդատեցէք պարագային հետ քրիստոնէայ սուրբերուն, որոնք կու գան կեանքի այլ եւ այլ բնագաւառներէն և յաճախ, մինչեւ ճգնաժամի պահը ճանաչում չեն գտած որպէս բացառիկ անհատներ: Անոնց վարքերը կը բացայայտեն զիրենք շրջապատող աշխարհի նենգութիւնն ու անարդարութիւնը, եւ կ'ընդհատեն մեզ, որպէս զի ինքնագոհ գնահատանք շռայլէնք մեզ շրջապատող աշխարհին: Անոնց չարչարանքը հերոսական է, ո՛չ անոր համար, որ գլուխ կը վերցնէ անզգայ չաստուածներու դէմ, այլ որովհետեւ ան կ'օրինակէ փորձառութիւնը Աստուածորդոյն, որ Իր գաւակներուն սիրոյն համար ապրեցաւ, զգաց եւ չարչարուեցաւ՝ անոնց կողքին:

Սուրբ Զատկուան հրաշքը այն աւանդն է, որուն փարեցան բոլոր սուրբերը: Որքան ալ որ անոնց կեանքը պարզ եղած էր, Քրիստոսի Յարութիւնը կրելով իրենց սիրտերու մէջ՝ անոնք փառաւորուեցան: Եւ երբ կողմնորոշման ժամանակը հասաւ՝ ինչպէս առաքելական դարուն, 1915-ին կամ տակաւին այսօր, անոնք մերժեցին իրենց Տէրը ուրանալ:

Մենք պարտինք ընդունիլ մեր դերը այս կարեւոր իրադարձութեան մէջ: Ինչպէս Զատկական պատումութիւնը ցոյց կու տայ, Յիսուս Իր հաւատքին, սիրոյն և փրկագործութեան պատգամը փոխանձեց անձերու, որոնք տարբեր չէին մեզմէ: Այս պատգամը իրերայաջորդ սերունդներուն փոխանցելը եղած է առաքելութիւնը տասնեակ, հարիւրաւոր, միլիոնաւոր հաւատացեալներու, անոնց կարգին նաեւ մեր նախնեաց: Այժմ մեր ձեռքերուն մէջն է այդ աւանդը, որ սերունդէ սերունդ փոխանցելը մեր պարտականութիւնն է: Թող այդ մտածումը առաջնորդէ մեզ այս Սուրբ Զատկուան շրջանին, երբ առաջին անգամ ըլլալով կը դիմաւորենք Քրիստոսի Յարութիւնը Յեղասպանութեան մեր Սուրբերուն հետ և անոնց հետ միասին կը հաստատենք սոյն անմահ խօսքին ճշմարտացիութիւնը, թէ՛

ՔՐԻՍՏՈՍ ՅԱՐԵԱԻ Ի ՄԵՌԵԼՈՅ,
ՕՐՀՆԵԱԼ Է ՅԱՐՈՒԹԻՒՆՆ ՔՐԻՍՏՈՍԻ.